

թիւնը, թակացեալ կ'ընկնայ թիկնաթոռին վրայ, և ախովք երեսը ծածկելով՝ կը հեզու ողորմ՝ և դառն արտասուաց հեղեղ մը: Իսկ մուրացիկ ծերունին ահաբեկեալ՝ չհամարձակելով վերցնել աչքերն իր զոհից որդւոյն և եղբօրը վրայ, որուն վրէժ-խնդրութեանը կը սպասէր անկէ ետքը քան ներողութեանը, կ'ընկնայ քահանային ոտքը, կը թանայ ջերմ արտասուօք, ըսելով յուսահատ ձայնիւ. Ո՛վ տէրդ իմ, ո՛վ դժբախտ տէր...: Այո, աւագակ եմ, հրէշ եմ և ոճրագործ. պատրաստ եմ հպատակել կամացդ, վրէժ խնդրէ ծնողացդ և եղբարցդ:

Վրէժ խնդրելը կը գոչէ քահանայն, սթափելով ՚ի ցաւոցն. վրէժ խնդրել և ոսնհար լինել թշուառացիոյն՝ որ արդէն տագնապեալ կը տանջի ՚ի իղձէ մտացն:

Իրաւունք ունէի, կը կրկնէ մուրացիկը, իրաւունք ունէի երբ կ'ըսէի թէ ապիրատութիւն ներողութեան անարժան է: Լաւ գիտէի որ նոյն իսկ կրօնքը պիտի մերժէր զիս ՚ի գրկաց իւրոց, ինձի նման անձի մը զոյժուն անգոր է, և... քոյրը պատիժը դժոխոց անբաւականք են ՚ի հատուցումն պարտեաց իմոց, որուն ծանրութիւնը լաւ ըմբռնած եմ:

Այս վերջին սրտատոչոր խօսքերը կը յիշեցնեն քահանային իր պարտքը. և մէկէն կը դադրի որդիական ցաւոց և քահանայական պաշտաման մէջ եղած կոխը: Մարդկային տկարութիւնն արտասուել տուաւ որդւոյն առ վայր մի իր ծնօղքը, բայց կրօնքը զորացոյց մէկէն զինքը: Քահանայն կ'առնու խաչելութիւնը, հայրենի ստացուածք՝ որ ընկեր էր նոյն եղեռնագործին ձեռքը, և ողորմ ու գորովագութ ձայնիւ կ'ըսէ.

Ո՛վ բրիտանացի դու. անկեղծ է զոզւումդ...: Շատ լաւ... Աստուած կը ներէ քեզ իր պաշտօնէին ձեռքովը: Եւ մէկ ձեռքը ծերունի մուրացիկանին զլսին վրայ ջնջելով և միւսովը բռնելով խաչելութիւնը, կ'իջնցնէ Սասունոյ ողորմութիւնն իր ընտանեաց մասերջին վրայ:

Մուրացիկն երեսն ՚ի վար խոնարհած, անշարժ կեցեր էր քահանային ոտքը: Արձակմանէն ետքը քահանայն երկընցուց ձեռքը ՚ի վեր ամբառնալու համար զինքը... բայց եղկելին ներկայացեր էր արդէն Աստուծոյ դատաստանին առջև:

Մերձեկայր գիշերն, զայրամայր ցուրտն, յայգութէ հետէ չէր ինչ օրիորդին առեալ կերակուր, և չգիտէր զինչ առնել: Նկատէր զղէմն ամենեցուն՝ թէ իցէ՛ ինչ յուսայ յուժեքէ ողորմութիւն. այլ ոչ ոք յայնցանէ՛ յորս պաշտեալ հայէր առ կարտութեան, դառնալու հայել յինքն՝ անկարօտ ինքեան: Փորձէր բաղիտի զգրուուն յոռեզոյն իջևանաց, և ամենայն ուստեք մերժէր ՚ի բաց. զի յոյս առաւելագոյն չաչից յաւուրս հանդիսին՝ փակէր զգուժ աղքատագունիցն իսկ ՚ի պանդոկապետաց. զի ուր հասանէ ուժեք ճոխանալ, առաւել կծկէ գձձուն ՚ի տալոյ: Գարձաւ եկն նստաւ առ մեծի խարուկին ՚ի կրեմեմեան հրապարակի. լայր լուելեայն՝ թաղձեալ տրտմութեամբ, և ոչ կարէր ճաշակել զպատառ իսկ հացին՝ զոր պատուոյ ուրուք տուեալ էր նմա կարեկցաբար: Յայն թշուառութիւն տեսանէր զանձն հասեալ՝ զի հարկաւորէր ալ կարկառել անցաւորաց ՚ի մայր, որոց մարթ էր տայ նմա զոյցն ինչ ողորմութիւն, թէպէտ և անկարեկիր՝ այլ գէթ առանց մերժելոյ զնա արհամարհանօք: Զգացումն ազնուականութեան արգելոյր զնա ՚ի մուրանալոյ, այլ ստիպէր ՚ի ցրտոյն բռնութեան, որով վտանգէին կեանք իւր՝ զոր ոչ իւր համարէր, կալով զցայգ ՚ի բացի: Վասն որայ ՚ի բաց եղեալ զազնուախուհութիւն, զմի ՚ի ձեռաց անեալ զերեսօք, և կարկառեալ զմիւսն առ որ նախ ընդ այն անցանէր, ստէ. Ա.ս.էր հօր քո՝ որ սիրէն զքեզ, առ սէր մօր քո՝ որ ծնան զքեզ, տուր ինձ գտանել խշտեակ ՚ի գիշերիս: Այրն, յորմէ խնդրէր ողորմութիւն, ՚ի նշոյլ խարուկին զինեալ զղէմն նորա՝ ստէ. Ի յոռի արուեստ ձեռն արկեալ է քո, դուտօք. չկարիցես մատակել. ՚ի քում յայգմ հասակի պարտ է չաշել գկեանս. մուրացիկք անհաճոյ են ինձ. Տէր տացէ քեզ: Ասաց, և ՚ի բաց անց:

Եղկելի օրիորդին ամբարձեալ զուս ՚ի վեր՝ որպէս թէ յերկնից խնդրելով օգնութիւն և քաջպիւրեալ ՚ի խրախոյս զոր զգաց ՚ի սրտի, համարձակեցաւ խնդրել և յայլոց անցաւորաց: Կէսք անցին գնացին ան-

լուր, այլք ետուն նմա խուն ինչ որ չբաւ էր  
 'ի պէտս նորա: Գիշերն յառաջ խաղայր,  
 ամբոխն լուծանէր, շիջանէին խարոյիք:  
 պահանորդք դրան սապարանիցն՝ որ եր-  
 թեկեկէին 'ի հրապարակին, մտանան առ  
 օրիորդն և ասէն: Չի է քո աստ: Դա 'ի  
 սաստե վայրագ գորականին ահաբեկեալ,  
 սկսաւ լալ առանց կարող լինելոյ պատաս-  
 խանել և ոչ ինչ: Կորա ոչ ինչ գթացեալ  
 յարտասուս նորա, չուրջ եղևն զնովալ  
 յանդուզն լրբութեամբ, և միւսանգամ ա-  
 սեն: Չի կաս աստ: Պատասխանի ետ օ-  
 րիորդն դողալով. Գամ յայնմ կողմանէ  
 թոպոյարթն՝ խնդրել յինքանկալէն շնորհս  
 հօր իմում: Հետի մինչև ցայր եկի. չբա-  
 ւոր եմ, և ոչ որ ուրեք դիս ընդունի: Քրք-  
 քիջ բարձին զինուորքն՝ ստայօգ զբանս  
 նորա համարեալ: Իսկ անմեղ օրիորդն  
 խռովալ խոյ կամէր տալ, այլ ոչ թողին  
 նմա՝ կալեալ զնա անդ բունի. և գուէր 'ի  
 խոր տրտմութենէ: Ատուած իմ, հայր իմ,  
 հասէք ինձ յօգնութիւն, ընդէր թողէք  
 զհէքս զիս զելիսաբեթիս: Ի ծայն աղաղակին  
 հասեալ անգր արք ամսք, բողոք բարձին  
 ընդդէմ՝ բունութեան գորականին: Իսկ օ-  
 րիորդն ձեռս 'ի վեր ամբարձեալ, ասէր.  
 Վկայ են ինձ երկինք՝ զի ոչ ստեմ'. զամ' ես  
 յայնմ կողմանէ թոպոյարթայ՝ խնդրել  
 շնորհս հօր իմում: Գործուցէք զիս, փրկե-  
 ցէ՛ք զիս, զի մի չև ընկալեալ զշնորհս՝ մե-  
 ոսայց: Ընդ այսպիսի բանս օրիորդին՝ յու-  
 ղեցան գուժք ամենցուն, և յառաջ մա-  
 տեան բազումք օգնել նմա, և մի 'ի նոցանէ  
 ասէ զգորականն. Դս ինքն ընկալայց զգա  
 'ի պանդոխի իմում, որ է 'ի հրապարակիս  
 առընթեր սրբոյն Բարսղի եկեղեցւոյն:  
 Թուի ինձ օրիորդ համեստ, թողէք զգա  
 ընդ իս: Եւ գորականին յետոյ ուրեմն  
 չարժեալ 'ի գուժ, թողին զնա և մեկնե-  
 ցան 'ի բաց. յայնժամ՝ օրիորդն փարեալ  
 զմեղովքն բարերարին՝ գոհանայր. Իսկ այրն  
 ածեալ զնա 'ի պանդոխին՝ որ մերձ էր անգր,  
 ասէ ցնա: Չիք իմ և ոչ սենեակ մի տալ  
 քեզ, վարձեալ է ամենայն. այլ յայսմ և եթ  
 զվերի ընկալցի զքեզ կին իմ 'ի սենեակ  
 իւր. բարեգուժ է նա, և մտադիր վասն  
 քո յանձն առցէ զնեղութիւն: Եւ զնայր լշ-  
 իսաբեթ դողալով՝ զհետ նորա ամսուունչ.  
 Եմոյձ զնա այրն 'ի սենեակ մի խոնարհ,  
 ուր էր կին նորա մտնկամարդ նստեալ առ  
 թնորով՝ մանկիկ 'ի գրիկ. որ 'ի մասանել  
 նոցա 'ի ներքս՝ յոտն եկաց: Եւ պատմէր  
 նմա այրն՝ յորմէ վտանգէ զերծուցեալ ա-  
 ձէր զհէք օրիորդն, խոստանալով՝ զհիւրըն-  
 կալութիւն նորա. և կինն հաստատեաց  
 զխոստումն, և կալեալ զձեռանէ օրիոր-

դին զուարթութեամբ և սիրով ասէ. Հէք  
 գտորիկ. իբր գոնատեալ է և խռովեալ.  
 այլ մի հոգար, խնամեսցուք մեք զքեզ.  
 Բայց անա ինձ, և մի ևս այդչափ տարա-  
 ժամեր արտաբոյ. 'ի քաղաք մեծամեծս չէ  
 պարա 'ի քում՝ յայդմ հասակի կալ օրիոր-  
 դի ցայս ժամ 'ի փողոցի: Պատասխանի ետ  
 Ելիսաբեթ՝ զի չէր իւր գտեալ ուրեք  
 օթեան, փակեալ էին ամենայն դրունք  
 վասն իւր. խոստովան եղև զի չբաւոր էր,  
 և պատմեաց առանց ամօթոյ որպէս եւ.  
 ղևորեալն էր, Ի լուր պատմութեան օրիոր-  
 դին՝ լայր կինն, եկաց և այր նորա, և ոչ  
 թերահաւատեցին ընդ բանս նորա, որպէս  
 և արտասոք փրեանց վկայէին. զի զժուա-  
 րա 'ի մասինս յայսմիկ պատրի սինլորն.  
 կեղծիք ճոխաբանք ոչ գնան առ նոսա,  
 ճշմարտութիւն և եթ չարժէ զսիրտ նոցա:

Ի վախճանէ օրիորդն զբանս իւր, Յա-  
 կոր Իոսսի՝ զի այս անուն էր պանդուկա-  
 պետին, ասէ ցնա: Չիք իմ կարողութիւն  
 'ի քաղաքիս, այլ որ ինչ կարեմա՝ արարից  
 վասն քո որպէս անձին, մի երկմտեր: Սեղ-  
 մեաց կինն զալ առն իւրոյ առ խնդու-  
 թեան, և եհարց ցելիսաբեթ՝ թէ էր որ  
 ծանօթ նորին առ 'ի յանդիման առնել զնա  
 ինքնակալին: Որիորդն ասէ. Եւ ոչ որ,  
 Քանիք երկնչէր անուանել զպատանին  
 Ամոյոֆ, թէ գուցէ 'ի վտանգ արկցէ զնա.  
 և գարձեալ զի գոր նպաստ կարէր ընդու-  
 նել 'ի նմանէ՝ որ Հեռի 'ի Լիւնիսա կայր:  
 Չէ ինչ փոյթ, ասէ կինն. բարութիւն և  
 թշուառութիւն առ մեծանձն մերոյ ինքնա-  
 կալին հօր ընծայականք են, և վրիպեա-  
 ցին... Ի վերայ էած Յակոր. Այտ ամե-  
 նեին. ինքնակայն Ալեքսանդր ընդունելոյց  
 է վաղիւ թագ յեկեղեցւոյ՝ Վերափոխման.  
 գտջիր անգր յանցանել իւրում, և անկեալ  
 յոտս նորա՝ խնդրեսցես շնորհս հօր քում.  
 ես իսկ եկից ընդ քեզ և օգնեցից: Յայն-  
 ժամ՝ Ելիսաբեթի շնորհապարտ գոհու-  
 թեամբ կալեալ զձեռանէ նորա, գուէր.  
 Ապամբարակս իմ բարեբարք, Տէր լուիցէ  
 ձեզ, օրհնեսցեն զձեզ ծնողք իմ. գուք ինք-  
 նին ընկերեսջիք ինձ և օգնեմիք, և ամջիք  
 զիս առ ոտս ինքնակալին... Իցէ՛ թէ և ա-  
 կանատես լինիցիք բարեբաստութեան իմոյ  
 այնպիսոյց, քան զոր մեծագոյն ինչ ոչ է  
 մարթ ունել մահկանացուի. եթէ լիցի ինձ  
 ընդունել շնորհս հօր իմում, և աւետել  
 զայն նմա, տեսանել զցնծութիւն նորա և  
 զմօր իմոյ... Եւ ոչ պարց կատարել զբանս  
 իւր, զի պատկեր մեծի երջանկութեանն  
 զօգցես իմն անյուսալի առնէր նմա զայն.  
 Թուէր նմա անարժան զոլ այնպիսոյց եր-  
 ջանկութեան: Հիւրընկալք նորա քաջալև-

րէին զնա 'ի յոյս՝ գրուածեօք բարեգթու-  
թեանն Ալեքսանդրի, պատմելով զամե-  
նայն բարերարութիւնս նորա, և զբերկրու-  
թիւն նորա 'ի բարերարելւ: Զմայրմանք լսէր  
նոցա Ելիսաբեթ, և ցանկալի իսկ էր նմա  
զգիշերն 'ի բուն լսել նոցա, այլ անազան  
էր ժամն: Հիւրընկալք նորա կամէին նմա  
հանգչել փոքր մի՝ առ 'ի կարող լինելոյ 'ի  
վաղու անդր 'ի սոսկ վաստակոցն: Եւ մեկ-  
նեալ Յակոբայ 'ի վերնայարկ տանն 'ի խորշ  
մի, կին նորա ընկալաւ զԵլիսաբեթ առ  
իւր 'ի մահճին: Բայց Ելիսաբեթ չկարէր  
փակել ընդ երկար դաշա իւր 'ի բուն: Սիրտ  
նորա յուզեալ էր յոյժ և 'ի փղձուկ հա-  
րեալ: Գոհութիւն մատուցանէր Աստուծոյ  
վասն ամենայնի, և ս և յաղազս ծանունց  
վշտաց իւրոց՝ որովք հանդիպեալն էր այն-  
պիսում ընդունելութեան, և ասէր: Եթէ  
նուազ էի հէք, ոչ յուզէին ընդ իս գութք  
հիւրընկալութիւն իմոյ: Եւ քուն իսկ անկեալ  
զարտեանամբք նորին՝ ոչ եբարձ 'ի նմանէ  
զբարեբաստութեանն զգացումն: զի ե-  
րազք ասործականք 'ի կերպս կերպս ըն-  
ծայէին նմա: Եբրթ զձայր իւր թուէր նմա  
տեսանել, և մերթ զմասնազատելի կեր-  
պարանս մօրն: Էր զի թուէր նմա զինքնա-  
կալին ինքեան լսել զբարբառ, և էր զի այլ  
իմն պատկեր երևեալ միգապատ՝ չներէր  
տեսանել յստակ զտիպս կերպարանաց  
նորա, և ոչ 'ի միտ առնուլ զկիրս՝ զոր 'ի  
սիրտ իւր զարթուցանէր:

Ի վաղու անդր թնդիւնք հրետոց ան-  
ընդհատք վասն կենաց ինքնակալին, դա-  
փիւնք թմբկաց և աղաղակ ցնծութեան  
համօրէն ժողովրդեան աւետարելին զոր  
հանդիսին: Ելիսաբեթ զհիւրընկալութի կը-  
նոջն պրկեալ գանձամբ զհանգրեմս 'ի փոխ,  
և զբարերարի առնն կալեալ զձեռանէ,  
խառն 'ի խուռն ընդ եկաւորս զճնտ ինքնա-  
կալին եմուտ յեկեղեցին Վերափոխման՝  
ուր Ալեքսանդր թագ առնուց էր: Զահիւք  
աւելի քան զհազար լուսադրոգեալ տա-  
ճարն սուրբ՝ փայլէր ակնախտիդ: Բազմէր  
ինքնակալն 'ի գահ զեղանշոյլ ընդ ճոխ հո-  
վանեալ, և զչխոյ նորահարսն առ նմա,  
զգեցեալ երկարանշիւր հանգրեմս պայ-  
ճառս զեղեցիկս յոյժ, որպէս զի զգերաշ-  
խարհիկս երևել տեսողաց: Կշխոյն 'ի ծուր  
իջեալ առաջի փեսային, ընդունէր 'ի ձե-  
ռաց նորա պսակ կայսերական, և զպար-  
կեալ նկատու նորա անյոյժ միութեան իւ-  
րեանց պատէր պերճ առհաստատչայս: Հան-  
չէպ նոցին արհի պատրիարքն Մոսկովայ  
Պլատոն 'ի բարձուէ սրբոյ բնմին յուշ առ-  
նէր ինքնակալին ճոխարան և Հոգեշարժ  
ճառիւ պարտոս թագաւորաց, և զհամարն

ստակալի՝ զոր 'ի նոցանէ պահանջելոց է Աս-  
տուած, փոխանակ փառացն և զգորութեան՝  
զոր շնորհէ նոցա: Ի մէջ անբա բազմու-  
թեանն՝ որով լի էր եկեղեցին, ցուցանէր  
նմա զՔառնիաքեցին՝ որ հարկս ամէին  
զմաշկս շնջեաց որսացիւց յԱլեքսանդրեան  
կղզիս հուպ յամբերիկեանն ցամաք, և զվա-  
ճառականս՝ որ գային յԱրքսանճեալայ, բե-  
րելով մեծութիւնս՝ զորս նաւք նոցա դնան  
խնդրել 'ի ծայրս ծովուց Եւրոպայ: Յու-  
ցանէր նմա զՎաստիստս եկեալս 'ի բերանոց  
գետոցն Ենիսեայ՝ ուր տիրէ մեծոն յուէր-  
ժական, և անձանթք են անդ ձկունք, և  
ոչ երբէք ընձիւղէ ցորեմաճատ: Յուցանէր  
և զՎաստութս, առ որս են մմերուկք հա-  
սունք և թղնիք, և որթոյ բերք քաղ-  
ցունք՝ որ մատուցանեն զինի պնիւ: Ա-  
ռափի առնէր զարձեալ և զբնակիչս Սեա-  
ւ և Կարսից ծովուն, և մեծին Սկիթիոյ՝ որ  
թեակոյսէ 'ի Պարսս և 'ի շենս և 'ի սահ-  
մանս ինքնակալութեան Մողոլաց, և մտից  
'ի յեյս արևու տարածանի՝ բովանդակեալ  
զկէս աշխարհին, և 'ի բեւեռ անդր գրեթէ  
հասանէ: Եւ յաւելոյր: Ընդարձակագոյն  
ինքնակալութեան երկրի՝ տիրապետեալ  
մեծութեան քո, և հանդերձեալ երգումն  
տալ 'ի բարեբախտութիւն Հինգերորդի մա-  
սին երկրի, յուշի կալ անմոռաց՝ զի հա-  
մար տալոց ես Աստուծոյ զբերուց բիւրա-  
ւորաց մարդկան: և զի անիրաւութիւն ինչ  
միում՝ 'ի փոքրկանց անտի գործեալ՝ զոր  
մարթ էր քեզ խափանել, համարեսցի քեզ  
'ի մեզս: Ի բանից աստի թուէր շարժեալ  
սաստկապէս սիրտ պատանուց ինքնակա-  
լին: Բայց յեկեղեցու՝ անդ գոյր և միւս  
այլ սիրտ ոչ ինչ նուազ շարժեալ, և էր  
այնորիկ՝ որ մատչէրն խնդրել շնորհս 'ի  
նմանէ հօր իւրում:

Յերգնուլ անդ Ալեքսանդրի նուիրել  
զկեանս իւր 'ի բարեբաստութիւն ժողովր-  
դոց իւրոց, թուէր Ելիսաբեթի լսել զձայն  
ողորմութեան իւղելոյ զկապանս տառա-  
պելոց ամենեցուն, և ոչ ևս կարաց նա  
հանդարտել: Երկնայնով իմն զգորթեամբ  
բացեալ իւր 'ի խոան անդ ուղի, և թափ  
ընդ ցանկ զորականին անցեալ, զիմեաց 'ի  
գահ անդր գոչելով: Ծնորհք շնորհք, Բար-  
բառն այն խափանեաց զարարողութիւն  
հանդիսին, և յարոց շուկ մատեան զորա-  
կանք, ձգեցին զօրիորդն արտաբոյ եկեղե-  
ցուց ընդգէմ աղաչանաց և ճգանց պան-  
դոկապետին: Բայց ինքնակալին լուեալ  
զբարբառն զայն, ոչ կամեցաւ յայնպիսում  
բարենշան աւուր մերժել զաղերս հէք օ-  
րիորդին: Հրամայեաց միում՝ 'ի պաշտօնէիցն  
սեղեկանալ զոր ինչ խնդրէրն: Եւ արտաքս

պաշտօնեայն, լուա զձայն պաղատանաց  
 Հիբի՛ որ ճգնէրն ընդզէ՛մ զինուորաց. եկն,  
 եհաւ, ետես, ծաննաւ և գոչեաց. Նա ինքն  
 է, Նիխարեթ է: Չկարէր օրիորդն հաւա-  
 տալ այնքանոյ քարեբաստութեան. չկարէր  
 կարծել գտանելոյ անդ պատանւոյ Սմոլո-  
 Փի առ ՚ի վրկել զհայր իւր. այլ ձայն նորա  
 և նորին ինքեան էր կերպարան, չէր մարթ  
 բմբռնել նմա ՚ի պատրանս. հայէր ՚ի նա  
 անբարբառ, կարկառէր առ նա զբազուկս  
 իւր՝ իրր այն թէ գայր նա բանալ իւր  
 զգրունս երկնից: Դիմեաց առ նա պատա-  
 նին յայլոյ խելս լեալ, ալ ՚ի յաջ յեռեալ,  
 և յերկուացեալ ինն ընդ տեսիլ չաաց, ա-  
 սէ. Գո՛ւ իցես, Նիխարեթ. ուստի՛ զաս  
 հրեշտակդ երկնացեղիկ: Օրիորդն սսէ. Ի  
 թոպոլքեայ գամ: Պատանին սսէ. Գո՛ւ ՚ի  
 թոպոլքեայ, միայնակ, հետի: Եւ յասելն  
 զայս՝ գողայր ՚ի յուզելոյ սրտին: Օրիորդն  
 սսէ. Այո, գամ միայնակ, գամ հետի,  
 խնդրել շնորհս հօր իմում, և վարեն զիս ՚ի  
 գահչոյից այստի ՚ի բաց, խլեն զիս յերեսաց  
 ինքնակալին: Իսկ պատանին լի ինզու-  
 թեամբ սսէ. Եկ, եկ Նիխարեթ. նա ինքն  
 յանդիման կացուցցի զքեզ ինքնակալին.  
 եկ, լուծ նմա զբարբառ քո. եկ, մատո նմա  
 զազերս քո, ոչ մերժեցէ նա զայն: Եւ  
 մինչդեռ ՚ի բաց արարեալ զզինուորս՝ աճէր  
 զնա յեկեղեցին, գային զուսալուորք ինք-  
 նակալին ՚ի դուրս ընդ գագ զուռն ե-  
 կեղեցւոյն. և յերեւել ինքնակալին՝ յառաջ  
 մատնաւ Սմոլոֆ կայեալ զձեռանն օրիոր-  
 դին. անկան երկրքեան ՚ի միասին առ ոտս  
 նորա, և սսէ պատանին. Բիս տէր, լուր  
 ձայնի տառագելոյս այսորիկ, լուր ձայնի  
 առաքինութեան. Մթանիսպաւփ Փոթովս-  
 քեայ դուստր կայ առաջի մեծութեանդ  
 քո. գայ նա յիսրիմեան անուպատէ, ուր  
 յերկոտասան ամաց հետէ հրձին ծնողք  
 նորա յաքսորս. գայ անտի միայնակ ան-  
 օգնական, հետի և մուրիկ զամենայն ճանա-  
 պարհիկ հատեալ, յանձն առեալ զվերժումն,  
 զարկածս, զմորիկս և զամենայն ճիչն և  
 վտանգ, առ ՚ի գալ անկանել յոտս ինքնա-  
 կալիդ՝ խնդրել շնորհս հօր իւրում: Իսկ օ-  
 րիորդն բազկատարած ազերսաւոր կրկն-  
 նէր. Շնորհս հօր իմում! Շչունջ կիացման  
 զհայր ընդ ամբոխն. ինքնակալն ինքնին  
 հիացեալ կայր. և թէպէտ բազում ինչ  
 լուեալ էր հակառակ Փոթովքեայ, այլ  
 յայնժամ ցրեցաւ ամենայն ՚ի մտաց նորա,  
 զի սսէր. Գտտեր այսպիսուր առաքինւոյ  
 չէ իսկ մարթ թէ փաստապարտ լեալ իցէ  
 հայր. այլ թէ իցէ իսկ լեալ, ներէ նմա Ա-  
 լեքսանդր. և սսէ ցօրիորդն. Աղատ է հայր  
 քո, շնորհեալ քեզ, Ի լուր շնորհաց ցնծու-

թիւն այնպիսի զեզաւ ՚ի սիրտ օրիորդին,  
 զի նուազեալ անկաւ անզգայ ՚ի վերայ  
 բազկաց պատանւոյն. և բարձեալ տանէին  
 զնա ընդ մէջ անթիւ բազմութեան ամբո-  
 խին որ ճանապարհ առնէր նմա կայթիւք  
 ձեռագ և դրուսաբօք առաքինութեան վեհ-  
 ազն օրիորդին և զթութեան ինքնակա-  
 լին: Եւ աճեալ ՚ի տուն Բակոբայ, յինքն  
 եկն. և տեսեալ զՍմոլոֆ ՚ի ծուր առաջի  
 իւր, նախկին բարբառ կրկնեաց զբան ինք-  
 նակալին. Աղատ է հայր քո, շնորհեալ քեզ,  
 Չի չև ևս զօրէր բարբառել, ՚ի հայեցուա-  
 ծոյ և եթ նորին յայտնի էր սրտին ցնծու-  
 թիւն և շնորհապարտ զոճութիւն. բազ-  
 մախօս էին աչք նորա: Խոնարհեալ պաս  
 ՚ի Սմոլոֆ, զողոզոլ և խանդաղատելի ձայ-  
 նիւ անուանեաց զհայր իւր և զմայր, և  
 յաւել. Տեսց՛ոք ուրեմն զնոսա, ուրա-  
 խասցո՛ք ընդ բարեբաստութիւն նոցա:  
 Այս բանք նորա ազեղցին ՚ի խորս սրտի  
 պատանւոյն, զի զայն առաջին նուազ  
 յայտ առնէր օրիորդն զսեր իւր ընդ նմա,  
 կցորդելով զնա նախկին զգացման սրտի  
 իւրոյ, նախկին բարութեան կենաց իւրոց  
 զի հաւասարակից զնա առնէր քաղցրագոյն  
 երջանկութեան՝ որում ակն ունէր: Բայնմ  
 հետէ յուսայր պատանին հաւանելոյ օ-  
 րիորդին չբաժանել զնա ՚ի կցորդութենէ  
 անտի:

Աւուրք ոչ սակաւք ՚ի վերայ անցին ՚ի  
 կատարումն շնորհի ինքնակալին. պարտ  
 էր քննել վերտնոյ զիրս Փոթովքեայ. և  
 ՚ի քննել անդ՝ խելումուտ եղև Ալեքսանդր  
 զի արդարութիւն ինքնին հրաժարել խոր-  
 տակել զկապանս ազնուականի ոտանկին,  
 ուր ինքն սրալէս շնորհ պարգևէր որ ինչ  
 արդարութեան էին պարտք. զոր ոչ երբէք  
 մոռացան արտորականքն զայս բան ինքնա-  
 կալին: Ի միում աւուրք ընդ բաւուստն ե-  
 մուտ Սմոլոֆ ՚ի սենեակ օրիորդին՝ ուր չև  
 ևս իշխան էր մտանել, և մատոց նմա  
 մազադաթ կնքելս յինքնակալէն առ հայր  
 իւր: Էառ գայն օրիորդն, և եղեալ ՚ի վե-  
 րայ աչաց իւրոց՝ եթաց զայն արտասուօք:  
 Բաւել յայնժամ Սմոլոֆ. Այ զազատութիւն  
 միայն շնորհէ հօր քում ինքնակայն, այլ և  
 զպատիւ իւր և զաստիճան և զզոյս. մե-  
 ծութիւնք՝ որ գեր ՚ի վերոյ ամբառնան  
 զայս, այլ ոչ և զՆիխարեթ: Սուրհան-  
 դակն որ աճէ զհրովարտակս զայս, հան-  
 դերձեալ է մեկնել ՚ի միտիւ ապուռ. խրն-  
 դրեցի և ընկալս յինքնակալէն՝ զնալ ընդ  
 նմա: Իսկ նա, գոչեաց յայնժամ Նիխարեթ,  
 ոչ եկից և ես ՚ի միասին: Սմոլոֆ սսէ.  
 Այո, գայցես և դու. որոց այլ չրթանց անկ  
 իցէ աւետել հօր քում զազատութիւն. զի-

տէի իսկ զիղձս քո, և ծանուցի զոյն ինքնակալին, գործվեցաւ և հրաման ետ. և տացէ քեզ վարդի զմի 'ի կտուց արքունի, և նաժիշտս երկուս, և երկու հազար առապի 'ի ծախս ուղևորութեան, Հայեցաւ օրհորդն 'ի Սմոլոֆ և ասէ. Յօրէ յորմէ տեսի գրեզ, չխլնմ' բարի ինչ ուստեք առանց քո ընկալեալ. քե ընկալոյ և զչնորէ ազատութեան հօր իմոյ, որում առանց քո չէր հնար տեսանել վերստին զհայրենիս իւր. քեզ սպա անկ է և աւետել նմա գազատութիւն. այդ և եթ բերկրութիւն լիցի վարձ բարերարութեանց քոց, Ոչ, ասէ, քեզ է անկ բերկրութիւնդ այդ. ինձ այլ ինչ գերազոյն վարձ է ցանկալի. Կերազոյն վարձ, ասէ օրհորդն. բարէ, և զի նչ քան զայդ գերազոյն. Յայնժամ պատանին կամեր ասել ինչ, և լռեաց՝ արկեալ զայս 'ի խոնարհ. և յետ վայրիկ մի լռութեան՝ ասէ 'ի մրմունջ. Առ ոտս հօր քո ասացից զայն:

Յորմէ հետէ պատահեացն Սմոլոֆ Ելիսաբեթի յանդաստակ եկեղեցւոյն, զոր ամենայն այց առնէր նմա՝ առանց կալոյ առ նմո երկար, առանց ընդունելոյ քան ինչ 'ի նմանէ սիրայորդոր, առանց վարդի մի 'ի պարտուպատշաճ մեծարանայ վերջանալոյ. կայր նա հեռի 'ի ծնողացն, չէր որ նմա ձեռնտու, անդ անօգնական, վասն որոյ և յոյժ պատկառելի և սրբազան էր յայս պատանւոյն, մինչև ամաչել նմա ասել ինչ՝ զոր չէր մարթ լսել օրհորդին առանց շառազուհեոյ:

Ելիսաբեթ 'ի մեկնել իւրում 'ի Մոսկովայ՝ հատոյց ասովնականաց իւրոց բարեբարաց վարձն առատասպէս. նոյնպէս և յանցանել իւրում ընդ Վոլկա առ Քազան քաղաքա՝ յիշեաց զնաւաստին Քիստոֆ, եհարց զնմանէ, և զիտացեալ զի անկեալ նա 'ի բարձուէ՝ դէնր 'ի մահիճս 'ի յետին կարտութեան, վեցեքուճք որդեովք՝ որոց չէր և հաց ուտելոյ, այց տարր նմա. Ոչքատ և քճքեալ ըտրձովք մեկնեալ էր 'ի նմանէ, և արդ դառնայր առ նա ճոխ և պայծառ հանդերձիւք, մինչև շճանաչել զնա նաւաւարին. եհան 'ի քսակէն զգրամիկն՝ զոր 'ի նմանէ ընկալեալ էր, եցոյց զայն նմա, և յիշեցոյց որ ինչ արարեալն էր նորա վասն իւր. և եղեալ 'ի վերայ անկողնոյն հարիւրեակ մի ռուպլեաց, ասէ. Առ ընկալ, ողորմութիւն ոչ երբէք սերմանի ընդունայն. սուս զոր ետուրն Ստուռձոյ, ահա զոր առաքէ քեզ Աստուած:

Բայց Ելիսաբեթ աս 'ի վաղ Հասանել առ ծնօղս իւր, զնայր զցայգ և զցերեկ սակայն 'ի Սարաբուլ զկայ էառ այց առ

նել գերեզմանի բարոյ տունն առտրեւականի, զի էին պարտք որդիական, և չէր մարթ օրհորդին ասպախտ առնել զայն: Ետես անգ զիսաշն՝ կանգնեալ 'ի վերայ գերեզմանի նորա, զվայրն զայն՝ ուր այնքան հեղեալ էր արտօսը, և հեղոյր դարձեալ այլ քաղցր արտասուս: Քուէր նմա տեսանի ուրախացեալ յերկինս բարոյ կրօնաւորին ընդ բարերաստութիւն իւր, և 'ի բարեգութ սրտի նորա յաւելեալ ինչ յամենակատար երանութիւնն՝ զոր վայելէն յԱստուած՝ 'ի տեսիլ երջանկութեան իւրոյ:

Ճեպիմ աստանօր, չէ ինձ ժամանակս յամելոյ, և ոչ զկայ տունում 'ի Քոպուրք՝ նկարագրել զիմոյութիւնս պատանւոյն 'ի յանդիման առնել հօր իւրում զօրհորդն, և ոչ զչնորհընկալ գոհութիւն օրհորդին առ քաղաքապետն բարերար: Յանկալի է ինձ ընդ նմա Հասանել 'ի հիւղ անդր, ուր վըշտագին ծնօղք նորա 'ի համար արկանեն զաւուրս բաժանման 'ի զստերէ իւրեանց: Ոչ կամեցաւ նա կանխել ազգ առնել ծնօղաց իւրոց զգարձ իւր. լուա զողջունէ նոցա 'ի Քոպուրք, զնոյն և 'ի Սայիմբա հաստատել. կամէր յանկարձ Էրեւի նոցա, ոչ զոր առեալ ընդ իւր՝ բայց միայն զպատանին: Ո՛հ, զիսաք բարախէր սիրտ նորա յանցանել իւրում ընդ անտառն, 'ի մօտել յեզերս լճին, և 'ի ճանաչել զմի մի 'ի մայրհաց, զմին մի 'ի ժայռին: Նշմարէր զհիւղն հայրենի, զիմէր անդր... այլ զկայ էառ. 'ի սաստիկ յուզմանէ սրտին պակեալ, ընկրկէր 'ի կարի հրճուանացն: Ո՛վ տղետից մարդկութեան, ահա լրումն նորին. ցանկամբ բարեբաստութեան, կամիմք զայն ծայրալիւր, և ծայրալիւր բարեբաստութիւն մահառիթ եղանի մեզ, չկարեմք ժուժկալել այնմ: Ելիսաբեթ անկեալ 'ի վերայ բազկաց պատանւոյն, ասէ. Եթէ լիցի ինձ գտանել հիւանդ զմայր իմ... Այս երկիւզ ազգեալ 'ի սիրտ նորա, մեզմեաց զազոյնն բարեբաստութեանն՝ որ ընկճէրն զնա, և դարձոյց 'ի նա զգօրութիւն իւր: Ընթացաւ, կոխեաց 'ի սեամս հիւղոյն, լուա զձայն իւրոցն և ծանեաւ. սիրտ նորա նուազէր, միտք իւր ծիպային, անուանէր զծնօղս իւր: Բացաւ դուռնն, ետես նա զհայր իւր, ձայն երարձ, եհաս մայր նորա, և 'ի գրկախառնեին ընդ նոսա՝ զոչեաց Սմոլոֆ. Ահա աւետաբեր ազատութեան ձերոյ, յաղթեաց ամենայնի, ընկալաւ զամենայն: Այլ անք պատանւոյն ոչ ինչ յաւելին 'ի խնդութիւն նոցա. Թերես չլուան իսկ զբանս նորա, զմայլեալք 'ի տեսիլ զստերն իւրեանց. զգային և եթ զգալուստ նորա, զի տեսանէին զնա, զի գտին զնա անդրէն, զի 'ի

գիրիս իւրեանց էր, զի ոչ ևս թողուն զնա. 'ի մոռացոնս եղեն նոցա' թէ իցեն յայխարհի այլ ինչ բարիք: Ընկղմուալ կային ժամն ձիգս 'ի գմայլման անդ իրբ անդգագայ, զոգացես իմն 'ի ցնորս. բարբառք ինչ ընդհատք ելանէին 'ի չրթանց նոցա, այլ ոչ գրեալին զոր ինչ ասէինն. 'ի զուր խնդրէին յայտնել որ ինչ կրէրն 'ի նոսա, ոչ գտանէին բանս զկիրան բացատրելոյ. լային, հառաչէին, և զօրութիւն նոցա նուաղեալ էր ընդ մտացն յառաւել խնդութենէն:

Յայնժամ անկեալ առ ոտս նոցա պատանին, ասէ. Ո՛հ, ոչ մի որդի է ձեր. ցարդ եղբայր իւր կոչէր զիս Նլիսաբեթի, այլ արդ առ ոտս ձեր ներեսցէ թերեւս ինձ ցանկալ այլու՞մ իմիք անուան: Եւ օրիորդին ձեռս 'ի ձեռս խառնեալ ծնողացն, և հայեւով 'ի պատանին, ասէ. Առանց սորա չլինէր թերեւս ինձ գառնալ այրէն. սա ամ զիս յոտս ինքնակային, սա բարեխօս եղև վասն իմ, սա խնդրեաց 'ի նմանէ շնորհս վասն ձեր և ընկալաւ, սա զարձուցանէ զձեզ 'ի հայրենիս, սա ինքն տայ զգոտար ձեր ձեզ, սա ամ զիս 'ի գիրկս ձեր: Արդ սես ինձ մայր իմ, վինչ շնորհս պարտ է ինձ մատուցանել սմա, ուստ ինձ հայր իմ, զոր շնորհակալիս մատուցանել սմա: Աստանօր Փեգորայ ողջապետեալ զգոտար իւր, ասէ. Շնորհակալութիւն քո լիցի սէր, որով սիրեմ ես զհայր քո: Եւ Սփրինձեր յաւել հրճուանօք. Նուէր սրտի քոյու՞մք նմանուց լիցի 'ի ձեր քան զամենայն բարերարութիւնս. այլ Ելիսաբեթ չհամարի զոլ այնուիկ առատու՞ ձեռն: Իսկ օրիորդին ստեալ զձեռն պատանուցն և տուեալ 'ի ձեռս ծնողացն, կարճաբեզ զիմօք և ցածութիամբ ասէ. խոստանանս չմկնկնել 'ի սոցանէ: Յայնժամ պատանին աս ընդ ինքն. Բարէ, արդեօք այլ ընդ այլոյ ինչ լուայ, արդեօք շնորհն զնա ինձ ծնօղք իւր, տրդեօք հաճի՞նա ընդ իս: Եւ ոչ կարգեցաւ կատարել զբանս իւր, խոնարհեալ զերեսս իւր ողողեալս արտասուօք առ ոտս Նլիսաբեթին, յերկինս իսկ չհամարէր թէ գուցէ երկմակութիւն առոււել քան զիւրն. զմայլու մն մօր՝ որ զգոտար իւր տեսանէր վերստին, խանդաղատելի պարծանք հօր՝ որ վասն ազատութեան իւրոյ շնորհապարս գտանէր արիութեան գասերն, անճառ խնդութիւն վեհագին և բարեկրօն օրիորդի՛ որ յայգուէ կենաց իւրոց լցեալ զբրբազնագոյն պարտս իւր, և 'ի ձայր առաքինութեան էր ժամանեալ, պարտութիւն այս անկանի բարեաց թուէր պատանուցն 'ի ստորև քան զբարեբաստութիւնն՝ զոր մատուցանէր նմա սէր:

Արդ եթէ պարտ իցէ ինձ սասել զաւուրց՝

որ յաջորդեցին այնու հետև, ցուցից զձեռագան յեղ յեղել առ դուստրն զգառնակըսկի՞ մորմօր սրտի իւրեանց մինչև 'ի գարձ նորա. ցուցից զնոսա յակճիտս ընդ գորով և ընդ յոյս 'ի լուր արկածից բազում երկայն ուղեորութեան նորա. լսելի արտօրից զօրձնութիւնս հօր նորա վասն ամեննցուն, որ օգնական լեալ էին գասերն իւրոյ. յանդիման արարից զմայր նորա՝ ցուցանելով պահեալ 'ի վերայ սրտին զմիայն զօրութիւն կելոյ իւրոյ ցայնժամ, զգիստին յղեալ առ նա 'ի գասերէ իւրմէ. պատմեցից որ ինչ ծնօղք նորա կրեցին կիրս 'ի լուր աքստրականին եկաւորի 'ի հիւղ իւրեանց՝ պատմելոյ զբարերարութիւնն ընկալեալ 'ի դըստերէ իւրեանց. վիպեցից զարտասու՞ զոր հեղին 'ի լսել զտառապանս նորա, զարտասուս զոր հեղին 'ի լուր առաքինութեան նորա: Յաւելից և զողջոյն նոցա հրաժարական մատուցեալ հիւղոյն, ուր այնքան աղէտս կրեալ էր նոցա, և ուր ապա առեալ զճաշակ սրբագոյն և երկնային հրճուանաց՝ որ վշտօք ստացանին և ծնանին յարտասուէք, հանգոյն ճառագայթից արեգական սպայճառագոյն ծաղելոց յետ ամպրոպաց 'ի գաւառ ցօղալից:

Սուրբ և անարատ նմանեալ հրեշտակաց օրիորդն Նլիսաբեթ, հաղորդ նոցին երաւնութեան, կեցցէ իբրև զնոսա յանմեղութեան և 'ի սիրելութեան: Ո՛վ սէր, ո՛վ անմեղութիւն, այ՞ ո՞ անլոյծ կցորդութիւն ձեր յարգարէ գլուխոտնականս երանութիւն: Աստանօր զկայ ստնում. զուարթ պատկերն, տեսարանք զուարճնայք կարի երկարատեք՝ վաստակեն զիտոս և զսիրտ, ոչ թուին ճշմարիտք, չհաւատայի լինին. զի անկորուստ բարեբաստութիւն չէ և չէ երկրաւոր բարի: Լեզու բազմազան և ճօխ՝ 'ի բացատրութիւն աղևտից՝ աղքատ է և ամուլ 'ի բացատրել զհրճուանս. օր մի ուրախութեան սպասէ զամենիմա նորին ճօխութիւն: Լիլիսարեթ 'ի գիրկս ծնօղացն կայ, ամեն կնա ծնօղք իւր 'ի հայրենիս, զարձուցանեն 'ի նսե՛կ նախահայր, պանծան ընդ առսքինութիւնս նորա, հարանացուցանեն իմասայի՛ զորով զերագանցէ, փեսայի՛ ոչ անարժանուց նմին, Բանէ արդ, զազարեացուք, հանգիցուք, հանկեցուք 'ի խորհուրդս յայստսիկ քաղցունս. որ ինչ ծանեալ զկենցաղոյս և զյեղախօխութեան սորա, որ ինչ զանկալութեանց 'ի դերև ելանելոյ և զանկայուն և զչնորականս բարեբաստութեանց, երկեցանցանին զիս, զի առ 'ի յաւելուլ 'ի պատմութիւնս յայս և էջ մի՛ հարկ լիցի ինձ պատմել աղէտս: